ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

15 ՀՈՒԼԻՍԻ
2026 թ.
№ 12 (1167)

Թերթի առաջին համարը լույս է տեսել 1965 թ. մարտի 11-ին
Երկշաբաթաթերթ ● հրատարակման 61-րդ տարի

ՀՊՄՀ
Վերակազմված 1922

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

«ՄԱՆԿԱՎԱՐԺ ԼԻՆԵԼԸ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԿԵՐՏԵԼ, ՍՏԵՂԾԵԼ ՄԱՐԴ, ԱՐԹՆԱՑՆԵԼ ՄԻՏՔ, ՆԵՐՇՆՉԵԼ ՀԱՎԱՏ ԵՎ ՁԵՎԱՎՈՐԵԼ ԱՐԺԵՔՆԵՐ».

ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը ճանապարհեց 2025-2026 ուսումնական տարվա շրջանավարտներին. բակալավրի և մագիստրատուրայի 1432 շրջանավարտ գնաց իր առաքելության հետևից՝ իր կյանքի շարունակվող ճանապարհին կերտելու և թև տալու երազանքներին ու ձգտումներին, որոնց իրականացման մեկնարկի համար ընտրել էր Մանկավարժականը:

Հուլիսի 8-ը երկար կմնա այս ուսումնական տարվա շրջանավարտների հիշողության մեջ: Տարեվերջն ամփոփվեց ավարտական վկայականների հանձնման հանդիսավոր արարողությամբ. 104 երջանիկների գերազանց ուսման համար կարմիր վկայականներ հանձնեցին անձամբ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը և ֆակուլտետների դեկանները: Իսկ 104 թիվը խորհրդանշում էր համալսարանի հիմնադրման տարիքը:

«Նրանք ընտրել են ոչ միայն մասնագիտություն, այլև առաքելություն, ինչպես ասում են, յուրաքանչյուր ավարտ նոր սկիզբ է: Թող այս օրը դառնա այն հիշողությունը, որին միշտ կվերադառնաք ժպիտով և երախտագիտությամբ». միջոցառումը վարող ուսանողները շրջանավարտներին մաղթեցին հաջողություն իրենց ընտրած առաքելության ճանապարհին:

Օրը լեցուն էր հույզերով, ժպիտներով, հպարտությամբ և առանձնահատուկ էր ոչ միայն շրջանավարտների, այլև ծնողների ու դասախոսների համար: Ծնողների, որ աջակցել են զավակներին, դասախոսների, որ կրթել են, գիտելիքներ փոխանցել, արժեհամակարգ ձևավորել:

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը շնորհավորեց շրջանավարտներին՝ ասելով՝ այսօր այն օրն է, երբ տարիների ջանքերը, անհանգստությունները, հաղթանակներն ու ձեռքբերումները վերածվում են նոր կյանքի մեկնարկի, որ շրջանավարտները ոչ թե փակում են մի դուռ, այլ բացում են անսահման հնարավորությունների ճանապարհը: Եվ յուրաքանչյուր շրջանավարտ իր հետ տանում է համալսարանի արժեքներն ու պատասխանատվությունը»:

Ռեկտորի պաշտոնակատարն ընդգծեց՝ մանկավարժ լինելը նշանակում է կերտել, ստեղծել մարդ, արթնացնել միտք, ներշնչել հավատ և ձևավորել արժեքներ՝ հավելելով, որ «ապրում ենք մի դարում, երբ տեղեկատվությունը հասանելի է մեկ շփումով, բայց իսկական իմաստնությունը, ազնվությունը և մարդկային արժեքները շարունակում են ծնվել միայն կենդանի շփման, վստահության և սիրով փոխանցված կրթության միջոցով»:

Լիլիթ Մկրտչյանը ուղերձներ փոխանցեց շրջանավարտներին, որոնք կուղեկցեն նրանց մասնագիտական ողջ ճանապարհի ընթացքում՝ չդադարեք սովորել, չվախենաք փոփոխություններից, փնտրեք նոր ճանապարհներ, փորձարկեք ստեղծագործ մտքեր ու աշխատանք, որովհետև մեծ փոփոխությունները սկսվում են համարձակ

քայլերից, պահպանեք ոգևորությունը, քանզի ուսուցչի ամենամեծ ուժը ոչ թե գիտելիքն է, այլ հավատը իր իսկ սեփական առաքելության նկատմամբ, եղեք արդար, բարի ու կարեկից:

Նա շնորհակալություն հայտնեց գործընկերներին՝ փորձի, գիտելիքի և իրենց սիրտը կրթության մեջ ներդնելու համար, իսկ շրջանավարտներին մաղթեց, որ նրանց ճանապարհը միշտ լուսավորվի գիտելիքով, բարությամբ և պետությանը ծառայելու ազնիվ ցանկությամբ:

«Վստահ եմ՝ ուր էլ կյանքը ձեզ տանի, այս պատերի ներսում ապրած տարիները չեն կրկնվի, որովհետև կան վայրեր, որոնք պարզապես կրթություն չեն տալիս, դրանք դառնում եմ մեր կյանքի մի մասը»,-ասաց ՀՊՄՀ № 57 հիմնական դպրոցի շրջանավարտ Նարե Ավետիսյանը:

➢2

Արտաշես Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆ

Սա այն երկիրն է, որ կորցրել ենք,
Սա այն երկիրն է, որ նորից գտանք:
Սա այն երկիրն է, ուր բարձրյալը
Նախաստեղծ կավից արարում էր կյանք:
Ճեփ-ճերմակ ամպեր կապույտ երկնքում…
Ուր որ է պիտի հրաշք կատարվի:
Հեռվում սքողված արարման ակունք,
-Արոր ու ակոս հերկած կտավին:
Ծաղկած տանիքին պար բռնած ծռեր,-
Հողն իրենով է Լույսը երիզել…
Կարմրաքար վանք ու թզենու ծառեր,
Հասունացել ու կաթում է թուզը:
Ձորի պռնկից կախված խաչքարեր,
Այրվող խնկի ծառ դեղին կտավին:
Բերդապարսպին՝ մեսրոպյան գրեր,
Բերդապարսպին՝ քանդակված տավիղ:
Սա այն երկիրն է, որ կորցրել ենք,
Երկիրն այն, որ մենք փնտրեցինք երկար:
Սա այն երկիրն է, ուր մեր անցյալը
Հավերժից հառնում, դառնում է ներկա:

Կրթության ամենաբարձր արդյունքը հանդուրժողականությունն է:
Հելլեն Քելլեր

1

Շրջանավարտներին շնորհավորեց նաև ՀՊՄՀ ավագ դպրոց-վարժարանի շրջանավարտ և արդեն Պատմության և հասարակագիտության ֆակուլտետ ընդունված Անի Մայանցը՝ ասելով. «Ավագ դպրոցում ես հասկացա, որ մեր սերունդը պատմության կույր հանդիսատեսը չէ, մեզ այսօր պետք չեն դասագիրքն անգիր անող սերունդներ, մեզ պետք են մտածող,

վերլուծող, սեփական արժանապատվությունն ու հողը ճանաչող ու հաղթանակ կերտողներ»: Դիմելով ավագ ընկերներին՝ նա ասաց՝ եկեք միասին գրենք մեր երկրի նոր ու հզոր պատմությունը:

Կուլտուրայի ֆակուլտետի լրագրության բաժնի բակալավրիատի շրջանավարտ Սիմոն Հովհաննիսյանը, որ նաև բուհի «Լավագույն ուսանող» մրցույթի հաղթողն է, պատմեց իր մանկավարժական առաջին քայլերի մասին, որն սկսվել է համալսարանի Ավագ դպրոց-վարժարանից:

Սիմոնը խոստովանեց՝ այստեղ գիտակցեց, թե որքան վեհ է մանկավարժի առաքելությունը, համալսարանը սովորեցրեց ոչ միայն սիրել և

հարգել գիտությունը, այլև այն վերածել լույսի և փոխանցել հաջորդ սերունդներին:

«Համալսարանը մեր կյանքի ամենակարևոր հիմքն է, որը ձևավորում է մեր տեսակը, կերտում մեր արժեքները և ուղղություններ տալիս մեր երազանքներին»,-ասաց շրջանավարտը, որն արդեն առաջին քայլերն է անում որպես ուսուցիչ:



Իր հաջողությունների ճանապարհը գաղտնազերծեց ՀՊՄՀ շրջանավարտ, ԻԿՕՄ-ի հայկական թանգարանների ազգային կոմիտեի նախագահ, Երևանի քաղաքապետարանի մշա-

կույթի և տուրիզմի վարչության պետի տեղակալ Հայկ Մկրտչյանը՝ շրջանավարտներին հորդորելով. «Հպարտացեք ձեր համալսարանով, ձեր ուսուցիչներով և միշտ շնորհակալ եղեք»:

Օրը նույն հանդիսավորությամբ շարունակվեց 10 ֆակուլտետներում. ավարտական վկայականների հանձնման արարողությունն ուղեկցվեց երախտագիտության ջերմ խոսքերով ու հրաշալի մաղթանքներով:

ԵՍ ԸՆՏՐԵՑԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆԸ

Երբ սովորում էի Մանկավարժական համալսարանի հենակետային վարժարանում և պետք է բուհ ընդունվեի, ուսումնասիրեցի տարբեր համալսարանների կրթական մեթոդներն ու հնարավորությունները, և ընտրեցի մանկավարժականը: Այս տարիների ընթացքում համալսարանը դարձավ ինձ համար ոչ միայն գիտելիք ստանալու վայր, այլև մասնագիտական ձևավորման, նոր ծանոթությունների և արժեքավոր փորձի միջավայր: Այստեղ ձեռք բերեցի գիտելիքներ, որոնք դարձան իմ հետագա ճանապարհի կարևոր հիմքը: Սա ոչ թե մի բանի ավարտ է, այլ նոր պատասխանատվության և նոր ձեռքբերումների սկիզբ:

Սիմոն Հովհաննիսյան
Կուլտուրայի ֆակուլտետի Հեռուստառադիոլրագրության բաժնի բակալավրի շրջանավարտ

Բարի երթ, սիրելի շրջանավարտներ: Խաղաղ ու լուսավոր ճանապարհ ենք մաղթում:

Սիլվա Ասրյան

ՀԱՅ-ՀՈՒՆԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հունաստանում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Տիգրան Մկրտչյանին հյուրընկալեցին Մանկավարժական համալսարանում: ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանի հետ հանդիպման ընթացքում կողմերը քննարկեցին հայ-հունական գիտակրթական և մշակութային համագործակցության հեռանկարները, Հայաստանի և Հունաստանի բուհերի միջև միջազգային կապերի զարգացման ու համատեղ ծրագրերի իրականացման հնարավորությունները:

Դեսպանը հանդիպեց նաև համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների հետ՝ հանդես գալով բաց դասախոսությամբ:

Տիգրան Մկրտչյանն անդրադարձավ հայ-հունական հարաբերություններին՝ պատմական անդրադարձում ներկայացնելով երկու ժողովուրդների քաղաքակրթական ընդհանրություններն ու երկու երկրների միջև ձևավորված ռազմավարական գործընկերությանը: Նա ընդգծեց, որ շուրջ երեք տասնամյակ է, ինչ Հայաստանի և Հունաստանի միջև ձևավորվել է համագործակցություն, հատկապես վերջին տարիներին, պաշտպանության ոլորտում այն ստացել է ռազմավարական նշանակություն, սակայն, որով չի սահմանափակվում համագործակցությունը. պաշտպանական համագործակցությունն ընդգրկում է նաև ռազմական կրթության և զինված ուժերի վերապատրաստման ոլորտները, որոնք էական դեր ունեն կարողությունների զարգացման գործում:

Դեսպանը ուսանողներին ներկայացրեց դեսպանության գործունեության առաջնահերթությունները՝ մասնավորապես ընդգծելով կրթության և մշակույթի ոլորտների առանձնահատուկ դերը հայ-հունական համագործակցության մեջ: Նա մեծապես կարևորեց մշակութային դիվանագիտության նշանակությունը, որը ժողովուրդների միջև փոխըմբռնման, վստահության և համագործակցության ամրապնդման կարևոր նախապայման է:

Դեսպան Տիգրան Մկրտչյանը անդրադարձ արեց նաև կրթության ոլորտում իրականացվող նախաձեռնություններին, հայագիտական կենտրոնների գործունեությանն ու ակադեմիական կապերի ընդլայնմանը:

Նա կարևորեց պատմաբանի մասնագիտությունը և օտար լեզուների իմացությունը դիվանագիտության ոլորտում՝ պատմության խորքային իմացությունը դիտարկելով որպես յուրաքանչյուր դիվանագետի մասնագիտական կայացման կարևոր հիմք:

Հանդիպումն ամփոփվեց հարց ու պատասխանով. դասախոսների և ուսանողների հարցադրումներին դեսպանը տվեց հստակ պատասխաններ:

Տիգրան Մկրտչյանը նշեց, որ ժամանակակից տեխնոլոգիական զարգացումները փոխել են աշխատանքի գործիքակազմը, սակայն չեն փոխարինել դիվանագետի առաքելությանը. «Տեխնոլոգիաները փոխում են աշխատանքի ձևերն ու գործիքները, սակայն չեն կարող փոխարինել մարդուն: Դիվանագիտությունն առաջին հերթին մարդկային շփում է, տվյալ երկրի պատմությունը, մշակույթն ու մտածողությունը հասկանալու կարողություն, հակասությունները կանխարգելելու, համագործակցություն ձևավորելու և վստահություն ստեղծելու արվեստ»:

Նա իրավացիորեն ընդգծեց, որ Հայաստանը պետք է ունենա բարձրակարգ դիվանագիտական ծառայություն, իսկ «դիվանագետի մասնագիտությունը պահանջում է գիտելիք, հետևողականություն, համբերատարություն և պատասխանատվություն»:

Տիգրան Մկրտչյանը անդրադարձավ իր մասնագիտական ուղուն, դիվանագիտական ծառայության առանձնահատկություններին, իսկ երիտասարդներին խորհուրդ տվեց լավ ուսումնասիրել պատմությունը, տիրապետել օտար լեզուների և երբեք չդադարել սովորել:

ՀՊՄՀ ռեկտորի պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը վստահեցրեց՝ հանդիպումը հնարավորություն տվեց ուսանողներին ավելի լավ պատկերացնել դիվանագիտական ծառայության առանձնահատկությունները, ծանոթանալ Հայաստանի արտաքին քաղաքական առաջնահերթություններին ու միջազգային հարաբերությունների ժամանակակից զարգացումներին:

ՆՐԱՆՔ ՏԱՐԲԵՐ ԵՆ ԵՎ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ

ՀՊՄՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը համագործակցության հուշագիր ստորագրեց «Լուսէ վերականգնողական կենտրոն» հիմնադրամի տնօրեն Գոհար Գալստյանի հետ: Հուշագրի ստորագրմանը ներկա էին ՀՊՄՀ պրոռեկտորներ Նաիրա Սաֆարյանը, Մարիամ Իսպիրյանը և Գիտական քարտուղար Հակոբ Թադևոսյանը:

Համալսարանի ղեկավարները կենտրոնում այցելեցին նաև հատուկ կրթական կարիքներով երեխաների, որոնց հետ աշխատում էին բուհի շրջանավարտները:

ՀՊՄՀ Միջազգային համագործակցության կենտրոնի նախաձեռնությամբ նույն օրը «Լուսէ վերականգնողական կենտրոն» հիմնադրամում դասախոսությամբ հանդես եկավ ՀՊՄՀ Զարգացման և կրթության հոգեբանության ամբիոնի դոցենտ, հոգեբանական գիտությունների թեկնածու Լիլիթ Վարդանյանը: Դասախոսությունը կազմակերպվել էր մի խումբ ծնողների համար, որոնք ունեն զարգացման հատուկ կարիքներ ունեցող երեխաներ:

Լիլիթ Վարդանյանն իր պրակտիկ փորձի ընթացքում շատ է հանդիպել կարծրատիպերի, որոնք խանգարում են հատուկ կարիքներ ունեցող երեխաների ծնողներին՝ ընդունել երեխային՝ ինչպես կա: Այդ կարծրատիպերը կաշկանդում են ծնողներին ոչ միայն ընդունել իրենց երեխային այնպես, ինչպես կան, այլև հնարավորություն չեն տալիս աջակցություն ցուցաբերել:

Թեման արդիական է, և հոգեբան Լիլիթ Վարդանյանը փորձեց լսարանում ներկա ծնողների հետ խոսել վերոհիշյալ խնդրի շուրջ: Ինչ է կարծրատիպը, ինչ գործնական գործիքներ են պետք նման երեխաների հետ աշխատելու համար, որոնք են ստիգմայի հետևանքները. հոգեբան Լիլիթ Վարդանյանը այս հարցերի շուրջ տեսական գիտելիքներ հաղորդելուց զատ դիտարկեց անհատական դեպքեր, կազմակերպեց ինտերակտիվ խաղեր ու վարժանքներ:

Լիլիթ Վարդանյանը լիահույս է՝ ակնկալիքներն արդարացան և կարծես թե ծնողների հետ հանդիպումն ստացվեց: Նրա կարծիքով ծնողները գիտակցեցին, որ իրենք մեծ համայնք են և փոխադարձաբար կարող են իրար օգնել ու աջակցել: Նրանք ցանկություն հայտնեցին պարբերաբար նման հանդիպումներ կազմակերպել իրենց համար, որպեսզի կարողանան արդյունավետ աջակցություն ցուցաբերել իրենց երեխաներին:

«Սա ես առաջանցիկ քայլ եմ համարում, որովհետև շատ ծնողներ հերքում են իրականությունը, հետևաբար և չեն կարող իրենց երեխաներին օգնել ու սատարել»,-ասաց հոգեբանը:

Այնուհետև իր կյանքի պատմությունը ներկայացրեց աուտիստիկ Վահագն Սեմերջյանը, որը Տուրիզմի քոլեջի 4-րդ կուրսի ուսանող է, ապագա զբոսավար, որ ցանկություն ունի ավարտելուց հետո սովորել Մանկավարժական համալսարանում:

Նա ներկայացրեց տեսահոլովակ, որտեղ ներկաները նրան տեսան մանկապարտեզում, վերջին զանգի արարողությանը, տարբեր թանգարաններում թեմատիկ զեկուցումներ վարելիս:

Վահագնը նվագում է, տիրապետում անգլերեն, հունարեն լեզուներին, ակտիվ հաղորդակցվում է և փորձում ամենուր անկաշկանդ պատմել իր և ընտանիքի պատմությունը: Նա ծնողների միակ երեխան է, նրան շատ է աջակցում մայրը, որը Մանկավարժական համալսարանի Հատուկ և ներառական կրթության ֆակուլտետի շրջանավարտ է:

Վահագնը ներկայացնում է՝ մեծանում է սիրո և ընտանեկան աջակցության միջավայրում, և այդ աջակցությունը դարձել է իր կյանքի ամուր հիմքը: Նա վստահեցնում է՝ ինքը մի քիչ տարբեր է մյուսներից, բայց ընտանիքը թաներ է տալիս, որ վեր բարձրանա և միշտ վստահ լինի, որ աշխարհում միշտ կա մի տեղ, որտեղ իրեն սիրում են:

Վահագնը գիտի՝ ինչ են մտածում մարդիկ աուտիզմով երեխաների մասին, որ նրանց հետ դժվար է շփվել, բայց վստահեցնում է՝ «մենք ունենք ուժեղ կողմեր, դժվարություններ, բայց նաև ներուժ, մենք յուրահատուկ ենք ու մի փոքր տարբեր»:

Լսարանում ներկա ծնողները լսում են աուտիզմ ունեցող մի երիտասարդի, որը սովորում է, զարգանում է, սիրում է բացահայտել, ունի նախասիրություններ, սիրում է հստակություն, կանխատեսելիություն, մասնակցում է ներառական փառատոնների, զեկուցումներով հանդես գալիս տարբեր աշխատաժողովների կրթական միջավայրերում:

«Ապահով միջավայրում ես կարող եմ հավատալ ու վստահել իմ ուժերին»,-ասում է Վահագնը՝ այսպիսով հավատ ու հույս ներշնչելով նաև մի խումբ ծնողների, որոնք ամեն օր առնչվում են այդ խնդրին:

Սիլվա Ասրյան

ԱՇԽԱՏԱԺՈՂՈՎ. «ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԵՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ»

Մանկավարժական համալսարանի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը հուլիսի 9-ին համագործակցության հուշագիր ստորագրեց Հանրապետական հոգեբանամանկավարժական կենտրոնի տնօրեն Լիլիթ Մնացականյանի հետ:

Նույն օրը Մանկավարժական համալսարանում անցկացվեց «Հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության ծառայությունների ներդրումը կրթական համակարգում» ծրագրի ամփոփիչ միջոցառումը. ներկայացվեց ծրագրի շրջանակում կատարված աշխատանքները, ձեռքբերումներն ու արդյունքները, նաև քննարկվեցին հետագա զարգացման հնարավորությունները:

ՀՀ ԿԳՄՍՆ, ՅՈՒՆԻՍԵՖ-ի, Հանրապետական հոգեբանամանկավարժական կենտրոնի, Ճապոնիայի կառավարության և Ճապոնիայի միջազգային համագործակցության գործակալության համատեղ ձեռնարկը անց էր կացվում Լեռնային Ղարաբաղից և հյուրընկալող համայնքներից տեղահանված անձանց հոգեկան առողջության և հոգեսոցիալական աջակցության ծրագրի շրջանակներում:

Ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Լիլիթ Մկրտչյանը կրթական համակարգի համատեքստում կարևորեց հանդիպումը՝ ասելով. «Որպես մանկավարժներ և կրթության կազմակերպիչներ՝ մենք քաջ գիտակցում ենք, որ ժամանակակից մանկավարժական մեթոդաբանությունը՝ հիմնված արժեքների ուսուցման վրա, ակտիվ երկխոսության և համագործակցության ձևաչափերով անցկացվող, չի կարող լիարժեք արդյունավետ լինել առանց սովորողների հոգեբանական բարեկեցության ապահովման»:

Ապագա ուսուցիչներին, կրթության գործընթացում, ինչպես նաև դպրոցական առարկաների դասավանդման և ուսումնական ծրագրերի բարեփոխումներում միշտ շեշտադրում ենք ինքնության, միջմշակութային առողջ հաղորդակցության, կայուն արժեհամակարգերի ձևավորման հարցերը՝ ասաց Լիլիթ Մկրտչյանը՝ ընդգծելով, որ աշխատաժողովի օրակարգը հագեցած է և արդիական: Նա վստահեցրեց, որ միջոցառումը նոր լույս է սփռելու երեխաների հոգեկան առողջության խթանման և հոգեսոցիալական օգնության բարձրացման վրա:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արաքսիա Սվաջյանը կարևորեց համագործակցությամբ անցկացվող աշխատաժողովը՝ համարելով, որ այն միաժամանակ շարունակությունն է նախանշում է այն աշխատանքների, որոնց կարիքը առկա է ուսումնական հաստատություններում:

Նախարարի տեղակալը նշեց, որ տարատեսակ անկանխատեսելի մարտահրավերների բարդ ժամանակաշրջանի խնդիրն է առավել զգայուն ու խոցելի երեխաներին նախապատրաստել այդ մարտահրավերներին: Ընդ որում թիրախային հաստատությունները դպրոցներն են և մանկապարտեզները, ինչպես նաև քոլեջները, հետևաբար բոլոր ուժերը պետք է կենտրոնացնել երեխաներին ուժեղացնելու, երեխաների տոկունության կարողությունները զարգացնելու և հոգեսոցիալական զագացումն ապահովելու վրա:

Նախարարի տեղակալը նկատեց՝ ուսումնական հաստատություններում հոգեբանական ծառայությունները պետք է այնպես կազմակերպել, որ նրանք ունենան կանխարգելիչ նշանակություն՝ կիզակետում ունենալով հոգեսոցիալական զարգացումը, ոչ թե աշխատեն միայն արդեն տարաբնույթ խնդիրներով երեխաների հետ:

Վերջինս խոսեց հատկապես գյուղական ուսումնական հաստատություններում մասնագետների պակասի, թիրախային խմբերի հետ ճիշտ աշխատելու, մասնագիտական վերապատրաստումների և այլ հարցերի մասին:

Օրակարգային հարցերի շուրջ ելույթ ունեցան ՅՈՒՆԻՍԵՖ-ի ներկայացուցչի պաշտոնակատար Սիլվիա Մեստրոնին և ՀՄԿ տնօրեն Լիլիթ Մնացականյանը:

Ողջույնի ելույթներին հաջորդեց պանելային քննարկումը:

Սիլվա Ասրյան

Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում հուլիսի 2-ին նշեցին Մատենադարանի ավագ գիտաշխատող, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի ծննդյան 95-ամյակը և նրա հեղինակած «Խիզանի մանրանկարչության արվեստանոցը» գրքի շնորհանդեսը:

Հրավարդ Հակոնյանը երկար տարիներ գործունեություն է ծավալել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում, որտեղ հիմնադրել է Արվեստի պատմության, տեսության և մշակութաբանության ամբիոնը, և Մատենադարանում: Մանկավարժական համալսարանում մեծ է նրա դերը արվեստագիտության ու սերունդների գիտակրթական գործունեության ասպարեզում:

Այս երեք հաստատություններում նա կամրջել է իր գիտական համագործակցությունը՝ նրանց հենքի վրա կառուցվելով իր աշխատանքային կենսագրությունը:

Հրավարդ Հակոբյանին ողջունեց Մատենադարանի տնօրեն Արա Խզմալյանը, որը նրան բնորոշեց որպես մի մարդու, որն աշխատել է բոլոր տնօրենների հետ, շփվել Հայաստանի և Սփյուռքի ճանաչված արվեստագետների հետ:

«Հրավարդ Հակոբյանի նման ճանապարհ անցած մարդկանց հետ շփվելիս ինձ համակում է մի խորհրդավոր զգացում, որ շփվում եմ ոչ միայն այդ մարդու հետ, այլ անցյալի տասնյակ գործիչների ու անցյալի իրադարձությունների հետ, մի հսկայական ժամանակաշրջանի հետ, և այդ առումով Հրավարդ Հակոբյանի ներկայությունը մեզանում ունի շատ կարևոր նշանակություն, որովհետև նրա մեկ դիպուկ կարճ խոսքը որևէ գործչի, որևէ իրադարձության վերաբերյալ կարող է ուղղակի լույս սփռել մի շարք իրադարձությունների ու հանգամանքների վրա»,-ասաց Արա Խզմալյանը:

Բանախոսն ընդգծեց, որ ապագային միտված բոլոր քայլերը հենվում են այն փաստի վրա, թե որքանով ենք մենք ամուր կանգնած անցյալի մեր հիշողության և ավանդույթների վրա, ըստ որի «Մատենադարանը այդ անցյալի, անցյալի հանդեպ մեր հիշողության և հարգանքի, նաև մեր ապագայի հանդիպման միջավայրն է»:

Այդ համատեքստում նա հրավիրեց բոլորին ուշադրությամբ դիտել Հրավարդ Հակոբյանի մասին պատմող ֆիլմը, որտեղ նա բնութագրվում է իր արտիսցիզմով, տեսախցիկի հետ աշխատելու վարպետությամբ:

Ելույթ ունեցողը մաղթեց, որ Հրավարդ Հակոբյանի նախանձելի բացառիկ, զարմանալի կենսունակությունը, հումորի զգացումը, մշտական ինքնավերահսկողությունը, որ մի անզուգական հմայք են պարգևում նրա կերպարին, մշտապես ուղեկցեն նրան. «Սա մի օրինակ է՝ ինչպես կարելի է չծերանալ, բոլոր տարիքներում լինել հետաքրքիր, համակրելի և ցանկալի անձնավորություն»:

Այնուհետև ներկաները դիտեցին «Կյանքը Մատենադարանում» վավերագրական ֆիլմը, որի հերոսը Հրավարդ Հակոբյանն էր, ուր ներկայացնում էր ինչպես սկսեց իր գործունեությունը Մատենադարանում: «Ես զգացի, որ Մատենադարանում աշխատելը հիասքանչ է, ես զգացի, որ հայտնվել եմ հրաշքների աշխարհում»,-ասում է նա ֆիլմում՝ հիշելով, թե անցյալի մատենագիրները ինչպես են ճգնել վանական համալիրների խոնավ խցերում, որի համեմատությամբ իր աշխատանքային վայրը արքայություն է:

94-95 տարեկանը ինչ տարիք է որ՝ ասում է արվեստագետը, որն առ այսօր կարդում ու գրում է: Նա 65 տարի աշխատում է Մատենադարանում՝ այն համարելով իր երկրորդ տունը: Այստեղ նա բազմաթիվ պատկերագրքեր է ստեղծել, արժանացել պետական մրցանակների:

«Ես զգացի, որ Մատենադարանում աշխատելը հիասքանչ է, ես զգացի, որ հայտնվել եմ հրաշքների աշխարհում. մատենադարանը մեր ժողովրդի պատմությունն է». *Հրավարդ Հակոբյան*

Ֆիլմում արվեստագետը շրջում է Մատենադարանում և մեծագույն գորովանքով է ներկայացնում որմնանկարները, որոնցով ցուցադրվում է հայոց պատմության երեք հիմնական շրջանները՝ անտիկ շրջան, միջնադար և կոմունիստական Հայաստան: Ընդգծում է՝ միջնադարում այդ ոլորտը աննախադեպ վերելք ապրեց: Ապա ներկայացնում է ուրարտական շրջանի որմնանկարները. այստեղ ամեն ինչ կա, այստեղ հազարամյակներն են:

«20-րդ դարի մեր գեղարվեստական մշակույթը աննախադեպ վերելք ապրեց, բայց 21-րդ դարը կարծես թե գրականության ու արվեստի դար չէ»,-ասում է Հրավարդ Հակոբյանը, ափսոսանքով ներկայացնում, որ Անկախության 30 տարիների պտուղները դեռ չենք տեսնում, բայց և լավատեսորեն վստահեցնում՝ դեռ կտեսնենք:

«Մատենադարանը մեր ժողովրդի պատմությունն է»,-ամփոփում է իր ողջ գիտակցական կյանքը հայ արվեստի պատմությանը նվիրած արվեստագետը:

Հոբելյարին շնորհավորական ուղերձներ են հղում ՀՀ ԳԱԱ-ի, Նկարիչների միության, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայի ղեկավարներն ու ներկայացուցիչները: Բոլոր ելույթ ունեցողները արժևորում են արվեստագիտության ասպարեզի մեծ

նվիրյալի գործունեությունը, նրա դերը արվեստագիտության զարգացման, մասնավորապես միջնադարի արվեստի շերտերը պատմության խորքից վերծանելու գործում, և փաստում՝ Հրավարդ Հակոբյանը վաղուց դարձել է հայ արվեստագիտության խորհրդանիշներից մեկը: Ոլորտի տարբեր ներկայացուցիչներ շնորհավորում են հոբելյարին՝ ծննդյան 95-ամյակի և վերջին գրքի՝ «Խիզանի մանրանկարչության արվեստանոցը» պատկերագրքի կապակցությամբ:

Պատկերագրքի խմբագիր Լուսինե Սարգսյանը հանգամանորեն ներկայացնում է գրքի բովանդակությունն ու արվեստագիտական արժեքը:

Օրը ուղերձների ու շնորհավորանքների պակաս չուներ. հոբելյարին երկար տարիների բեղուն աշխատանք մաղթեցին ՀՊՄՀ ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայա-ցուցիչները:

Արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Հրավարդ Հակոբյանի ներդրումը Մանկավարժական համալսարանում սերունդների հիշողության ակունքներում է:

Սիլվա Ասրյան

ԳԻՏԵԼԻՔԻ ԵՎ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ VAKE ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Ժամանակակից կրթության ամենամեծ մարտահրավերը գիտելիք փոխանցելը չէ, այլ մարդ ձևավորելը: Այսօր, երբ աշխարհը փոխվում է աննախադեպ արագությամբ, իսկ տեղեկատվությունը հասանելի է մեկ հպումով, ուսուցչի առաքելությունն այլևս չի սահմանափակվում փաստերի և տեսությունների փոխանցմամբ: Նրա դերը վերաիմաստավորվում է՝ որպես մտածող, պատասխանատու և արժեքներ կրող սերունդ ձևավորողի: Հենց այս գաղափարն է այսօր վերափոխում աշխարհի բազմաթիվ համալսարանների ուսուցիչների պատրաստման ծրագրերը: Եթե նախկինում առաջնայինը առարկայական գիտելիքի յուրացումն էր, ապա այժմ կրթության առանցքում են քննադատական մտածողությունը, արժեքային կողմնորոշումները, համագործակցության մշակույթը, սոցիալական պատասխանատվությունը և սովորողին որպես ամբողջական անհատ զարգացնելու տեսլականը:

Այսօր համալսարաններն այլևս պարզապես գիտելիքի փոխանցման կենտրոններ չեն: Դրանք ձևավորում են այն մասնագետներին, որոնք վաղը կձևավորեն հասարակության կրթական և արժեքային դիմագիծը:

Այս վերափոխումն իրականացնելու համար բարձրագույն ուսումնական հաստատությունները հրաժարվում են դասավանդման ավանդական, պասիվ ձևաչափերից և անցնում ուսանողակենտրոն ու քննադատական մտածողությունը խթանող մոդելների: Ուսուցիչների կրթության մեջ արժեքային բաղադրիչի ներդրման և միջազգային լավագույն փորձի տեղայնացման փայլուն օրինակ է Erasmus+ PROVE «Արժեքներին միտված կրթության խթանումը հարավային Կովկասում» նախագիծը, որում ներգրավված է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը:

Erasmus+ PROVE նախագծի շրջանակներում ՀՊՄՀ-ն ոչ միայն տեսականորեն կարևորում է, այլև գործնականում ակտիվորեն կիրառում է VAKE (Values and Knowledge Education-Արժեքահեն և գիտելիքահեն կրթություն) նորարարական մեթոդաբանությունը: Այս մոտեցումը հնարավորություն է տալիս կրթական գործընթացում ներդաշնակորեն համադրել կոնստրուկտիվիստական ուսուցումն ու բարոյական դիլեմների քննարկումը:

Մեթոդաբանության արդյունավետ ներդրման նպատակով ՀՊՄՀ-ն իրականացրել է մի շարք թիրախային և գործնական քայլեր, որոնք ուղղված են ինչպես ապագա, այնպես էլ գործող մանկավարժներին. համալսարանում մշակվել և հաջողությամբ իրականացվել է «Արժեքների և գիտելիքների կրթություն խաղաղության և համագործակցության համար» պիլոտային դասընթացը, ինչպես նաև VAKE մեթոդաբանությունը ներդրվել և փորձարկվել է «Հոգեկարգավորում» և «Հայաստանի սոցիալ-տնտեսական աշխարհագրություն» դասընթացներում: Այս դասընթացների շնորհիվ ուսանողները տեսական նյութը յուրացնում են ոչ թե մեխանիկորեն, այլ կոնկրետ բարոյական կոնֆլիկտների և իրական կյանքից վերցված դիլեմների վերլուծության միջոցով: Քննարկումների և բանավեճերի ընթացքում ուսանողները սովորում են հիմնավորել սեփական տեսակետը, լսել դիմացինին և դրսևորել հանդուրժողականություն:

Ծրագրի ազդեցությունը համալսարանական պատերից դուրս տարածելու համար ՀՊՄՀ-ն իրականացրել է գործող ուսուցիչների վերապատրաստում: Վերապատրաստումների ընթացքում մանկավարժները գործնականում ծանոթացել են VAKE գործիքակազմին, ինչը նրանց թույլ կտա իրենց ամենօրյա դասապրոցեսում արդյունավետորեն կիրառել արժեքահեն կրթության մոդելները:

Այսպիսով, ՀՊՄՀ ուսանողներն ու վերապատրաստված ուսուցիչներն անձամբ են անցնում արժեքների ձևավորման այդ ուղին, որպեսզի հետագայում նույն հմտությունները կարողանան արդյունավետորեն փոխանցել իրենց աշակերտներին:

Ներդնելով PROVE ծրագրի նմանօրինակ նախաձեռնություններ և գործիքավորելով VAKE մեթոդաբանությունը՝ ՀՊՄՀ-ն դադարում է լինել լոկ գիտելիք տվող կառույց: Այն վերածվում է կենդանի արժեքների դարբնոցի, որտեղ ձևավորվում է կրթության նոր մշակույթ՝ հիմնված փոխադարձ հարգանքի, բարոյականության և քաղաքացիական բարձր գիտակցության վրա:

Մարինե Մաթոսյան
Աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԽՈՀԵՐ

Նստած եմ կապույտ դահլիճում, իսկ հոգիս լցվել է կապույտ կարոտով: Դիպլոմս եմ ստանալու... Հնչեց իմ անունը, և ես վերադարձա իրականություն...

Հազար միտք մի քանի ակնթարթում...

Ինչ է, սրամն չէի սպասում չորս տարի: Ուսանողներիցս յուրաքանչյուրը այս օրը չի պահում երազանքների տաքուկ ապաստարանում...

Թվում է՝ տենչանքներիս ուղեմոլար մեղուներն այնքա՛ն շռայլ են եղել: Հիվանդ, հանճարեղ պատանու մեղուները հեռավոր ազգականներն են իմ մեղուների, քանզի տարաժամ հածումն ինձ էլ է համակել. միտքս սավառնում է, հեռանալով անվերջ՝ մոտենում է ինձ, և նշանավոր պահն է, երբ մտային դեգերումներս հանգրվան են նշմարում... ՀՊՄՀ-ում.... Լուսանկար... Վերջ.... Վե՛րջ:

Օգնության է գալիս հուշիկներից մեկը: Առաջին կուրսի առաջին օրն է: Ընթերցասրահում ենք: Հարգարժան դեկանն է ողջույնի խոսք հղում ուսանողներիս: Շուտով անհանգիստ ու որոնող հայացքներ են հայտնվում: Ամաչում են ներս գալ:

Ուշացածներն են: Պարոն Գալստյանն իրեն բնորոշ անկեղծությամբ ու մեղմությամբ հարցնում է.

- Աղջիկնե՛ր, մեր երամից եք, չէ՞... Նստեք...

Հուշումն արդեն կար: Փաստորեն՝ ամեն երամ մի օր պիտի զգա հեռանալու կսկիծն ու անորոշության վախը, բացի թևերը՝ փորձելով անհունը գրկել...

Էլի Մեծարե՛նց... Գլխումս տողերն են երգում. «Հոգիս թռչնիկ մըն է...»: Ճիշտ է, սիրելի Միսաքի ապրումները չեմ կարող զգալ (բարեբախտաբա՛ր...), բայց հավատում եմ, թեկուզ ինձ չափազանց զգայուն համարեք, որ գրողները մեզ հետ երկխոսության մեջ են մշտապես. մնում է ականջալուր լինել: Մնում է, որ դիմանամ թռչուն-հոգուս թևերի շարժին (եթե վախենում ես, ինչո՞ւ ես թափահարում թևերդ՝ փորձելով թռչել):

Մայրիկս կողքիս է: Ասում է՝ բնական է, որ հուզվում եմ, և հոգուս մեջ թախիծ կա... Ես ժպտում եմ՝ նայելով իմ կյանքի կարևորագույն մարդուն ու բերկրանքով հիշելով, թե քանի անգիր սովորեց ինձ հետ, քանի վեպ ու դասախոսություն լսեց անհուն համբերությամբ: Հասկանում եմ՝ իմ կողքին է հաջողության և անուշ տրտմության ճանապարհիս գաղափարակիցը, ապավենը, հոգեկի՛ցը... Երջանկությունս հազարապատկվում է...

Գրքատոն, երեխեքի ժպիտներ ու արցունքներ, դասախոսներ, որ գորովանքով ասում, իսկ հայացքով հաստատում են. «Միշտ առա՛ջ: Դուք կարող եք»:

Ավարտական աշխատանքս Լևոն Շանթի ստեղծագործությանն էր նվիրված: Սիրելի գրողի փիլիսոփայությունը պարզորոշում է քաոսը խոհերիս. «Կարևորը մեր նվաճած հանգրվանները չեն, այլ այն պայքարը, որ կը մղենք նպատակի ճամփուն վրա»: Ինձ ավելի լավ եմ զգում...

Մոտենում է ավարտը հիշարժան օրվա: Դասախոսները բարի երթ են մաղթում... Հիշում եմ մեծագույն անհատների, որոնք մի օր կանգնած են եղել մեր փոխարեն, լսել ոգևորիչ խոսքերն ու հավանաբար նույն հույզերն ապրել. Հրանտ Մաթևոսյան, Ռազմիկ Դավոյան, Սուրեն Մուրադյան... Բանասիրականի հեքիաթի՞ց են կերտվել, թե՞ իրենք են այն լցրել իրենց լինելությամբ...

Ես հարստացած կգնամ՝ պարտք մնալով իմ բաժանմունքի հեքիաթ-իրականությանը, տանելով ինձ հետ անգին խորհուրդներ, հիմնարար արժեքներ ու գիտելիքներ, մարգարտաշար հուշերի գանձ...

Ասում են՝ գողերն են վերադառնում հանցանքի վայր:

Քանի որ ես գող չեմ, իսկ իմ ու Բանասիրականիս պատմության մեջ հանցանք չկա, հայտարարում եմ սրտի թրթիռով, բայց համարձակորեն.

- Ես վերադառնալու եմ...

Սուսաննա Չարչյան
Բանասիրական ֆակուլտետի բակալավրի շրջանավարտ, 4-րդ կուրս

ԱՆՓՈԽԱՐԻՆԵԼԻ ՄԱՐԴԻԿ ԼԻՆՈՒՄ ԵՆ...

Ցավով տեղեկացնում ենք, որ կյանքից հեռացել է ՀՊՄՀ Կենսաբանության, քիմիայի և նրանց դասավանդման մեթոդիկայի ամբիոնի պրոֆեսոր, մանկավարժական գիտությունների դոկտոր Տիգրան Թանգամյանը: Նա Մանկավարժական համալսարանի Կենսաքիմիական ֆակուլտետի կենսաբանության բաժի շրջանավարտ էր, և որի գիտամանկավարժական ողջ գործունեությունը ավելի քան հինգ տասնամյակ կապված էր հարազատ համալսարանի հետ:

Նրա հեղինակած դասագրքերով և ուսումնամեթոդական ձեռնարկներով սովորողների և ուսուցիչների մի քանի սերունդներ են կրթվել:

Մանկավարժական համալսարանի ղեկավար և պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները ցավակցում են Տիգրան Թանգամյանի ընտանիքի անդամներին, հարազատներին, գործընկերներին և ուսանողներին:

Ստորև ներկայացնում ենք ուսանողուհու արտառուչ խոսքը՝ ուղղված սիրելի դասախոս Տիգրան Թանգամյանին:

Այստեղ առաջին անգամ էի վարում մեթոդիկայի դասը: Իմ դիմաց նստած էր մի մարդ, որն ամենամեծ ազդեցությունն է ունեցել իմ՝ որպես մարդու և մանկավարժի ձևավորման վրա:

Ընկեր Թանգամյանի հետ ծանոթացել էի շատ ավելի վաղ, քան նա կսկսեր մեզ դասավանդել: Իմ հեղինակային «Փոքրիկ զրույց ԿՔԱ լավագույնների հետ» շարքի շրջանակում հոդված էի գրել նրա մասին: Այդ օրվանից ինձ միշտ «լրագրող» էր ասում, թեև ինձ կենսաբանություն էր դասավանդում:

Ավարտելուց հետո էլ հաճախ էի զանգում նրան: Ամեն անգամ նույն ջերմությամբ ասում էր. «Ապրես, որ հիշում ես, լրագրող», ու անջատում զանգը՝ այդ վեհ ու զուսպ պատասխանի տակ թաքցնելով իր փոքրիկ ուրախությունը:

Նա ինձ և շատերին սովորեցրեց անհամեմատ ավելին, քան պահանջում էր իր առարկան: Սովորեցրեց այն, ինչը չկա ոչ մի դասագրքում: Սովորեցրեց ապրել, լինել արժանապատիվ և մարդ մնալ՝ սեփական օրինակով:

«Մանկավարժը պետք է լինի դերասան, հոգեբան և լիարժեք մասնագետ»,- ասում էր նա, հետո ավելացնում.«Արժեզրկվում ենք այն պահին, երբ որոշում ենք գոռալ աշակերտի վրա, որովհետև հենց այդ պահին փլուզվում է մեր և աշակերտի միջև կառուցված շփման կամուրջը»:

Նրա խոսքերն այնքան հաճախ եմ մեջբերում, որ ինձ հարազատ բոլոր մարդիկ գիտեն, թե ինչ մեծ դեր ունի իմ կյանքում: Նա առանձնահատուկ էր մեզ համար, իսկ մենք այն վերջին սերունդն էինք, որոնց բախտ վիճակվեց լինել այդ մեծ մարդու սաները:

Ասում են՝ անփոխարինելի մարդիկ չկան: Բայց ես երբեք չեմ համաձայնվել այդ մտքի հետ: Ընկեր Թանգամյանն այն մարդկանցից էր, որին ոչ ոք չի կարող փոխարինել: Չէ՞ որ այլևս չեն կրկնվի նրա մատների յուրահատուկ շարժումները, որոնց նշանակությունը մեկ անգամ էր ասում, դասերը չեն ընդհատվի թեմայի հետ կապված նրա հումորներով, որոնք ամենադժվար նյութն անգամ հեշտ էին դարձնում: Այլևս նման կերպով չեն զգա լսարանի լարվածությունն ու առանց ուղիղ խոսքի չեն տա այն խրատը, որը միշտ ծնվում էր հենց դասի ընթացքից, իսկ երբեմն չեն լինի Տերյանի տողերով համեմված դադարներ, որոնք կրկին դասին կկապվեն:

Երեկ էի որոշել, որ այսօր առավոտյան անպայման զանգելու եմ նրան: Երկար ժամանակ էր՝ չէինք խոսել: Բայց առավոտը սկսվեց մի ցավոտ գրառումով. իմ մանկավարժական իդեալն այլևս չկա: Չկա... բայց նրա թողած արժեքները, խոսքերը և օրինակն ապրում են մեր մեջ:

Ես այսուհետ կձգտեմ լինել ավելի լավ մանկավարժ, ավելի լավ մարդ և իմ աշակերտներին փոխանցել այն արժեքները, որոնք սերմանել է պարոն Թանգամյանը:

Այո՛, ես համոզված եմ՝ անփոխարինելի մարդիկ լինում են:

Մարիամ Սարգսյան
Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետի շրջանավարտ

Կհանդիպենք մագիստրատուրայում

Չորս տարի առաջ, երբ երկյուղած ու հուզված քայլերով առաջին անգամ անցնում էի ՀՊՄՀ-ի դռների մոտով, ես տեսնում էի ընդամենը մի մեծ կրթօջախ, բայց չէի էլ կարող կռահել, որ այդ դռները բացվելու են ինձ համար և մեծ դեր են ունենալու իմ ճակատագրում: Այդ օրը ես պարզապես համալսարան էի մտնում՝ լի անորոշությամբ ու պատանեկան երազանքներով, բայց այսօր կանգնած նույն այդ շեմին՝ արդեն հասուն, ինքնավստահ ու նպատակասլաց, և հասկանում եմ՝ ես մտել էի մի աշխարհ, որտեղ ինձ վիճակված էր ոչ միայն ստանալ մասնագիտություն, այլև վերագտնել ու կերտել իմ սեփական «ես»-ը:

Այս չորս տարիները սովորական ուսանողական ուղի չէին. դա մի վառ ու խոստումնալից արկած էր, որը հիմնովին փոխեց իմ կյանքի հետագա ընթացքը: Ու այսօր, հետադարձ հայացք գցելով անցածս ամեն մի վայրկյանին, վստահաբար ու մեծ հպարտությամբ կարող եմ ասել՝ իմ կյանքի ամենաճիշտ որոշումներից էր քայլերս դեպի Սկզբնական կրթության ֆակուլտետ ուղղելը: Սա մի ֆակուլտետ է, որն իր ջերմությամբ, պրոֆեսիոնալիզմով և ուսանողակենտրոն միջավայրով պարզապես անգերազանցելի է: Այստեղ է բաբախում Մանկավարժականի սիրտը, որովհետև հենց մեզ է վստահված երեխայի առաջին քայլերը կրթության աշխարհում կերտելու սրբազան գործը: Համալսարանական տարիները միայն դասախոսությունների, անքուն գիշերների ու քննությունների ընթացք չէին: Դրանք մարդկանց, անմոռանալի զգացողությունների ու համատեղ հաղթահարված դժվարությունների մի ամբողջ պատմություն էին, իսկ այդ պատմության ամենավառ, ամենարձագանքող ու շարժիչ ուժն ինձ համար դարձավ Ուսանողական խորհուրդը: Այն ինձ համար պարզապես կառույց չէր. այն դարձավ իմ երկրորդ տունը, անդադար ակտիվության, ինքնադրսևորման ու հասունացման մեծ դպրոց: Ուսանողական խորհրդում ներգրավվածությունը, անթիվ միջոցառումներն ու նախաձեռնություններն ինձ սովորեցրին աշխատել թիմում, պատասխանատվություն ստանձնել և հասկանալ, որ համալսարանական կյանքը շատ ավելի լայն է, քան պարզապես լսարանային պատերը:

Շնորհակալ եմ մեր ֆակուլտետի հրաշալի դասախոսներին, որոնք իրենց անսպառ գիտելիքներով, բարձր պահանջկոտությամբ ու մայրական հոգատարությամբ օգնեցին ինձ ձևավորվել որպես ապագա մանկավարժ: Ամենամեծ նվերը, որ տվեց ինձ այս ճանապարհը, այն ներքին վստահությունն էր, որ երեխաների հետ շփումը, դպրոցական պրակտիկաները, հուզմունքով լի առաջին քայլերը՝ որպես ապագա դասվար, պարզապես աշխատանք չեն, այլ բացառիկ առաքելություն:

Ավարտական հանդիսավոր արարողությունն ու ձեռքիս մեջ փայլող վկայականը իմ կյանքի ամենահուզիչ ու սպասված հանգրվաններից մեկն են: Այս վկայականն ինձ համար միայն փաստաթուղթ չէ. այն չորս տարիների քրտնաջան աշխատանքի, պայքարի, անքուն գիշերների, մեծ երազանքների ու այն մարդկանց սիրո պատմությունն է, որոնք այս ողջ ընթացքում եղել են իմ կողքին: Շնորհակալ եմ քեզ, սիրելի՛ Մանկավարժական համալսարան՝ ինձ կրթելու, հավատալու և այս գեղեցիկ ճանապարհը նվիրելու համար: Սա հրաժեշտ չէ, այլ ընդամենը նոր ու ավելի բարձր նշաձող սահմանելու հայտ: Ես չեմ հեռանում Մանկավարժականից, ես մնում եմ հարազատ բուհի պատերի ներսում՝ շարունակելու իմ կրթական վերելքը: Առջևում նոր էջ է, նոր մարտահրավերներ ու նոր բարձունքներ, որոնք պատրաստ եմ նվաճել: Ուստի, վստահ ու հաստատուն քայլերով ասում եմ՝ կհանդիպենք մագիստրատուրայում...

Անահիտ Խուդավերդյան
Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրի շրջանավարտ

ՀԻՇԵԼՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Մարդասիրության մեծագույն դասը

Դժվար է ընդունել, որ գրող, գրականագետ, թարգմանիչ, նանսենագետ Ֆելիքս Բախչինյան անհատականությունն այլևս մեզ հետ չէ, որ Թեքեյան մշակութային միության դահլիճում նրա մասին թևածող հուշը հիշողության նոր շերտեր էր բացում ու բացահայտում՝ ներկաներից յուրաքանչյուրին պարգևելով նրա հետ կապված այս կամ այն դիպվածի մասին ապրումը:

Ելույթներն անկեղծ հուզումների ազնիվ պոռթկումներ էին, գրողի կյանքի հետաքրքիր դրվագներին նորովի մոտենալու պահեր, մարդկային ծանոթ ու ջերմ հայացքներ, որ օրը դարձնում են անսովոր ու Բախչինյանական...

Նա Ֆրիտյոֆ Նանսեն մեծ մարդասերի անունը հայ իրականության մեջ դարձրեց յուրաքանչյուրինը, մարդասիրությունը մեծարեց բարոյական հատկանիշների մեջ, մեծ նորվեգացուն նվիրված բազմաթիվ գրքերի մեջ մեզ՝ ապրողներիս թողեց մարդկայինի ակունքներին մոտ լինելու մեծագույն դասը...

Գրականությունը ամենամեծ դասն է, որ մեզ դարձնում է բարի ու հավատավոր, սովորեցնում է սիրել կյանքն ու մարդուն, սովորեցնում է արժեքներ ունենալ ու գեղեցիկ ապրել... Նաև այս դասերը թողեց իրենից հետո գրականության նվիրյալ Ֆելիքս Բախչինյանը, ում ապրած կյանքը նվիրում էր ու կարոտ, հայրենիքի ու նրա կորուստների ու ցավերի հանդեպ անմնացորդ տուրք, անսահման հոգատարություն:

Հունիսի 30-ին Թեքեյան մշակութային միության դահլիճում Ֆելիքս Բախչինյանին նվիրված հուշհանդիպումը, կարծում եմ, ներկաների մեջ այսպիսի խոհեր արթնացրեց: Մտովի հետ գնացի դեպի գրողի հետ ունեցած իմ հանդիպում-զրույցները՝ պոեզիայի և ընդհանրապես գրականության, մարդու և մարդկայինի շուրջ:

Ներկաները զգացին ու ճանաչեցին Բախչինյանի կյանքի փիլիսոփայությունը, երբ լսեցին տարիներ առաջ Արթուր Բախտամյանի հեռուստահաղորդման հյուրի անկեղծ ու անպաճույճ պատասխանները, նորովի ճանաչեցին գրողին ու թարգմանչին, Նանսենյան գործի նվիրյալին, Նանսենի մարդասիրության հանրահռչակումն իր կյանքի մեծագույն գործը համարած մարդանհատին:

Թեքեյան մշակութային միության տնօրեն Ռուբեն Միրզախանյանի, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալլիտա Դոլուխանյանի, ՀՊՄՀ «Սփյուռք» գիտաուսումնական կենտրոնի տնօրեն, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Քնարիկ Աբրահամյանի, «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի տնօրե, ՀՊՄՀ Բանասիրական ֆակուլտետի շրջանավարտ Հայարփի Խաչատրյանի ելույթներն իրական երկխոսություններ էին մարդու և նրա ժամանակի հետ, մարդու և նրա թողած ժառանգության մասին. 100-ից ավելի գրքեր, անհատականությունների դիմանկարները սերունդների հիշողության մեջ վերակերտելու և փոխանցելու անթաքույց ինքնանվիրում:

Հանդիպում, որ որդուն՝ Հայկ Բախչինյանին հայրական սիրո ու նվիրումի հետ աղերսվելու մի նոր հնարավորություն տվեց... Հուզումնառատ օր, որ հուշեր ու դասեր պարգևեց ներկաներին՝ գրականության ու կրթության, տարբեր ոլորտների ներկայացուցիչներին ու պարզապես մարդկանց, որոնք բախտ են ունեցել շփվելու Ֆելիքս Բախչինյանի հետ, մի մարդու, որի ակունքները էրզրումում են, իսկ ծննդավայրը՝ չքնաղ Լոռին՝ իր անտառների ու լեռների գեղեցկությամբ, որ իր ապրած կյանքում մշտապես գուրգուրեց հոգում:

Ֆելիքս Բախչինյանի ապրած կյանքը մեծ դաս է սերունդների համար, որը գրողի՝ կյանքից քաղած դասերի ամբողջությունն է, և նրա թողած գրական ժառանգությունը երկար ճանապարհ է անցնելու սերունդների հետ՝ սերունդներին տալու նվիրումի ու մարդասիրության անկեղծ օրինակներ:

Սիլվա Ասրյան

Վստահություն սեփական ուժերի նկատմամբ

ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի «Անձի հոգեբանություն և հոգեբանական խորհրդատվություն» կրթական ծրագրի մագիստրատուրան, հպարտորեն կարող եմ ասել, որ համալսարանն ինձ հնարավորություն տվեց սովորել ժամանակի լավագույն պրոֆեսորադասախոսական կազմից, ունենալ հոդվածներ և ձեռք բերել զարգացման նորանոր հնարավորություններ: Համալսարանն ինձ տվեց ոչ միայն բարձրագույն կրթություն, այլև ձևավորեց իմ մասնագիտական մտածողությունը, արժեքային համակարգը և վստահություն սեփական ուժերի նկատմամբ:

Համալսարանի ընձեռած հնարավորությունների շնորհիվ ուսման ընթացքում ես ձեռք բերեցի հիմնավոր մասնագիտական գիտելիքներ, որոնք անհրաժեշտ են հոգեբանի պատասխանատու աշխատանքը հաջողությամբ իրականացնելու համար: Դասախոսների նվիրվածությունն ու բարձր մասնագիտական պատրաստվածությունը մեծ ազդեցություն ունեցան իմ զարգացման վրա: Նրանք փոխանցեցին ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև գործնական փորձ, մարդկային արժեքներ և մասնագիտական էթիկա, որոնք կարևոր ուղենիշներ են իմ հետագա գործունեության համար: Համալսարանական ձեռքբերումներն ինձ համար ոչ միայն կատարած աշխատանքիս գնահատական են, այլև ապագա մասնագիտական հաջողությունների ամուր հիմք:

Տարիներ առաջ հոգեբանությունը միայն սիրելի մասնագիտություն էր, իսկ 2017 թվականը՝ իմ կյանքի նոր ուղու և մասնագիտական ձեռքբերումների ազդարար: Երբ ընդունվեցի Հայկական պետական մանակվարժական համալսարանի վարժարանը, ապա՝ համալսարանը, անգամ չէի կարող պատկերացնել, որ ուսանողական տարիներս, բացի մասնագիտական գիտելիքներ ստանալուց, լի կլինեն տարատեսակ ձեռքբերումներով՝ գիտաժողովներ, տպագրված հոդվածներ, միջազգային համագործակցության ծրագրեր, հայ և արտերկրյա նոր ընկերներ: Համալսարանն ապացուցեց, որ կրթությունը ոչ միայն գիտելիք ստանալու, այլև ժողովուրդներին մերձեցնելու կարևոր միջոց է:

Այժմ, գերազանցությամբ ավարտելով

Սաթենիկ Տեփոյան
Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի շրջանավարտ

Կարինե Ավալյան
Սկզբնական կրթության
ֆակուլտետի
մագիստրատուրայի 2-րդ կուրս

«Այսօր անսահման հպարտ եմ, որ մանկավարժ եմ: Համոզված եմ՝ հենց մանկավարժն է ձևավորում հասարակության մտածողությունը, արժեքներն ու ապագան».
Կարինե Ավալյան

-Կարինե՛, ինչ ակնկալիքներով ընդունվեցիր Մանկավարժական համալսարան:

-Երկար ժամանակ չէի կարողանում հասկանալ, թե ինչ ճանապարհ ընտրել: Ինձ հետաքրքրում էին ամենատարբեր ոլորտներ, մինչև որ մի փոքրիկ, բայց շատ կարևոր դեպք տեղի ունեցավ: Մի օր ակամայից օգնեցի անծանոթ փոքրիկ երեխայի: Մայրիկս, որն այդ ընթացքում նույնպես փորձում էր օգնել ինձ մասնագիտական կողմնորոշման հարցում, այդ պահից հետո ասաց. «Երեխաները քեզ վստահում են, իսկ դու՝ նրանց: Կարծում եմ՝ քո ճանապարհը մանկավարժությունն է»:

Այդ խոսքերն ինձ համար դարձան շրջադարձային: Ընտրեցի նախադպրոցական մանկավարժությունը և այսօր արդեն վեցերորդ տարին է, ինչ ուսումնասիրում եմ այս հիմնաքարային մասնագիտությունը:

Հիշում եմ՝ առաջին կուրսում երբեմն ամաչում էի, երբ ընկերներս ասում էին, որ դառնալու են բժիշկ, իրավաբան կամ դատավոր, իսկ ես՝ դաստիարակ: Այդ ժամանակ գուցե դեռ ամբողջությամբ չէի գիտակցում իմ ընտրության արժեքը: Այսօր, սակայն, անսահման հպարտ եմ, որ մանկավարժ եմ: Համոզված եմ՝ հենց մանկավարժն է ձևավորում հասարակության մտածողությունը, արժեքներն ու ապագան: Ուրախությամբ եմ նկատում, որ իմ շրջապատում կան երիտասարդներ, որոնք տեսնելով իմ վերաբերմունքը մասնագիտությանս հանդեպ, նույնպես ընտրել կամ պատրաստվում են ընտրել մանկավարժի ճանապարհը: Դա ինձ համար ամենաընդունելի գնահատականներից մեկն է:

-Սկիզբը դժվա՞ր էր: Ովքե՞ր աջակցեցին քեզ:

-Անկեղծ ասած՝ համալսարանական կյանքի սկիզբն ինձ համար շատ ջերմ էր: Դպրոցից հասկացա, որ յուրաքանչյուր դժվարություն լուծում ունի, եթե պատրաստ ես սովորել և աշխատել:

- Գաղտնիք չէ, որ ոչ բոլոր ուսանողներն են Ուսանողական խորհրդում ակտիվ գործունեություն ծավալում, որովհետև մտածում են, թե հասարակական ակտիվությունը կխանգարի ուսմանը: Դատելով քո ակտիվ գործունեությունից՝ կարծում եմ՝ այլ կարծիք ունես:

-Դեռ համալսարան ընդունվելուց առաջ գիտեի, որ ուզում եմ ակտիվ ուսանողական կյանք ունենալ: Առաջին իսկ օրը, երբ Ուսանողական խորհուրդը դիմավորում էր առաջին կուրսեցիներին և ներկայացնում համալսարանական կյանքը, ես արդեն որոշել էի, որ լինելու եմ այդ մեծ ընտանիքի անդամը:

Այս տարիների ընթացքում ոչ մի անգամ չեմ զղջացել իմ ներդրած ժամանակի, էներգիայի կամ նվիրվածության համար: Ընդհակառակը՝ հենց Ուսանողական խորհուրդն է ինձ տվել այն փորձը, որը հնարավոր չէր ստանալ միայն լսարաններում: Այն սովորեցրել է աշխատել մարդկանց հետ, ղեկավարել ծրագրեր, արագ որոշումներ կայացնել, պատասխանատվություն կրել և հավատալ սեփական ուժերին:

Ես երբեք չեմ մտածել, որ հասարակական ակտիվությունը խանգարում է ուսմանը: Իմ փորձը ցույց է տվել ճիշտ հակառակը: Երբ սիրում ես այն, ինչ անում ես, սովորում ես ճիշտ կառավարել ժամանակդ, իսկ ձեռք բերած հմտություններն օգնում են նաև ուսման մեջ: Համոզված եմ, որ համալսարանական կյանքը միայն դասախոսություններով չի սահմանափակվում. այն նաև մարդկանց, փորձի, նախաձեռնությունների և ինքնաբացահայտման ճանապարհ է:

- Ինչպե՞ս համադրեցիր ուսումն ու հասարակական ակտիվությունը ուսանողական կառույցում:

-Կարծում եմ՝ ամենակարևորը ժամանակը ճիշտ կառավարելն է: Ես սիրում եմ նախապես պլանավորել իմ օրը, սահմանել առաջնահերթություններ և քայլ առ քայլ շարժվել դեպի նպատակներս: Բայց միաժամանակ սովորել եմ նաև չհիասթափվել, եթե ամեն ինչ չի ընթանում նախապես կազմած ծրագրով: Այդպիսի իրավիճակներում պարզապես վերադասավորում եմ առաջնահերթություններս և շարունակում աշխատել: Ինձ համար կա ևս մեկ կարևոր սկզբունք՝ եթե գաղափար ունես կամ գործ, որը պետք է անել, մի՛ հետաձգիր: Հաճախ հաջողության ճանապարհին ամենամեծ խոչընդոտը ոչ թե դժվարություններն են, այլ հետաձգումը: Այդ պատճառով փորձում եմ հնարավորինս արագ անցնել գործի: Հավանաբար հենց այս մոտեցումն է օգնել ինձ համատեղել ուսումը և հասարակական գործունեությունը, աշխատանքը և մասնագիտական զարգացումը՝ առանց դրանցից որևէ մեկը զոհաբերելու:

- Պատմիր քո հաջողությունների մասին:

-Վերջերս մասնակցում էի «Լավագույն ուսանող» մրցույթին: Երբ հավաքում էի այս տարիների ընթացքում ունեցած ձեռքբերումներս, առաջին անգամ ինքս էլ կանգ առա ու հետ նայեցի անցած ճանապարհիս: Կարմիր դիպլոմ, մագիստրատուրա, միջազգային գիտաժողովներ, գիտական հոդվածներ, Erasmus+ ծրագրին մասնակցություն, Ուսանողական խորհրդի փոխնախագահի պատասխանատու աշխատանք... Այդ պահին հասկացա, թե որքան երկար և ուսանելի ճանապարհ եմ անցել:

Սակայն եթե պետք է առանձնացնեմ ամենամեծ ձեռքբերումս, դա ոչ թե մրցանակներն են կամ կոչումները, այլ այն, որ գտել եմ իմ կյանքի առաքելությունը: Արդեն չորս տարի աշխատում եմ իմ մասնագիտությամբ՝ թե՛ նախադպրոցական տարիքի երեխաների հետ, թե՛ միջազգային առցանց հարթակներում հայերեն դասավանդելով ինչպես հայ, այնպես էլ օտարազգի սովորողներին:

Երբ տեսնում եմ երեխաների առաջընթացը կամ լսում եմ, որ իմ դասերից հետո որևէ մեկը սկսել է ավելի սիրել հայերենը կամ ավելի վստահ է խոսում մայրենի լեզվով, հասկանում եմ, որ ճիշտ ճանապարհի վրա եմ: Այդ զգացողությունը որևէ մրցանակով հնարավոր չէ չափել:

- Ինչ ես անում, երբ դժվարությունների ես հանդիպում: Ունե՞ս աջակիցներ, որոնց ուժին կարող ես ապավինել:

-Կարծում եմ՝ յուրաքանչյուր ճանապարհ անխոչընդոտ չի լինում: Իմ կյանքում նույնպես եղել են հիասթափության ու դժվարությունների պահեր: Այդ ժամանակ փորձում եմ մի փոքր դադար տալ ինձ, վերականգնել ուժերս, վերաիմաստավորել նպատակներս և նոր գաղափարներով շարունակել ճանապարհս:

Ինձ միշտ ուժ են տվել ընտանիքս, հարազատ մարդիկ և այն միջավայրը, որտեղ աշխատում ու սովորում եմ: Բայց հետաքրքիր օրինաչափություն եմ նկատել. ամեն անգամ, երբ թվում է՝ հոգնել եմ, իմ կողքին միշտ հայտնվում է մի մարդ, որի աշխատասիրությունն ու նվիրումը նորից ոգեշնչում են ինձ: Այդպիսի հանդիպումները հիշեցնում են, որ միշտ էլ կա աճելու, սովորելու և ավելի լավը դառնալու հնարավորություն:

- Ինչ են քեզ համար լավագույնը լինելու ձգտումը և միշտ առաջնագծում լինելու հնարավորությունների բացահայտումը :

-Ինձ համար լավագույնը լինելը երբեք չի նշանակել մրցել ուրիշների հետ: Ավելի կարևոր է ամեն օր մրցել երեկվա սեփական անձի հետ և փորձել մի փոքր ավելի լավը լինել, քան երեկ էիր:

Ինձ ուժ է տալիս այն միտքը, որ իմ աշխատանքն ուղղված է երեխաներին՝ ապագա հասարակության կերտողներին: Ես ցանկանում եմ լինել այնպիսի մանկավարժ, որը ոչ միայն գիտելիք է փոխանցում, այլ նաև արժեքներ, մտածողություն, պատասխանատվություն և սեր սեփական հայրենիքի նկատմամբ: Դրա համար նախ ինքս պետք է անընդհատ զարգանամ և համապատասխանեմ այն արժեքներին, որոնք ցանկանում եմ փոխանցել իմ սաներին: Հենց այդ նպատակն էլ ամեն օր ստիպում է ինձ առաջ շարժվել, սովորել, ստեղծել և հավատալ, որ յուրաքանչյուր փոքր քայլ վաղը կարող է դառնալ մեծ գործերի սկիզբ:

-Գաղտնազերծիր քո որոշ քայլեր, որոնցով պայմանավորված է նպատակներիդ իրականացումը:

-Չեմ կարծում, որ հաջողության որևէ գաղտնի բանաձև կա: Իմ դեպքում ամեն ինչ սկսվում է նպատակից: Եթե մարդը հստակ գիտի, թե ինչ է ուզում, ապա իր աշխատանքի «ինչուն» և «ինչպեսը» շատ ավելի պարզ են դառնում: Ես միշտ փորձում եմ սահմանել հասանելի, փոքր նպատակներ և հերթով իրականացնել դրանք: Այդպես յուրաքանչյուր փոքր հաղթանակ դառնում է հաջորդ քայլի շարժիչ ուժը: Եվ, թերևս, ամենակարևոր սկզբունքը, որով առաջնորդվում եմ, շատ պարզ է. եթե գիտես, որ ինչ-որ բան պետք է անել, արա՛ այսօր: Մի՛ սպասիր «ավելի հարմար» օրվան: Հաճախ հաջողությունը կախված է ոչ թե բացառիկ հնարավորություններից, այլ ժամանակին արված քայլերից:

Համոզված եմ՝ աշխատասիրությունը, կարգապահությունը, պատասխանատվությունը և սեփական գործի նկատմամբ սերը վաղ թե ուշ տալիս են իրենց արդյունքը:

Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի

Իմ սիրտն այնտեղ է, որտեղ երեխաներն են

Մասնագիտության ընտրությունը կյանքի ամենապատասխանատու որոշումներից մեկն է: Երբ ավարտում էի դպրոցը, երկար էի մտածում, թե որ ճանապարհն ընտրեմ: Ի վերջո հասկացա, որ իմ սիրտն այնտեղ է, որտեղ երեխաներն են: Միշտ առանձնահատուկ սեր և հոգատարություն եմ ունեցել երեխաների հանդեպ, իսկ նրանց հետ աշխատելու, կրթելու և նրանց առաջին հաջողություններին մասնակցելու միտքը դարձավ այն հիմնական պատճառը, որի շնորհիվ ընտրեցի «Տարրական մանկավարժություն» մասնագիտությունը:

Այս չորս տարիներն ինձ համար եղել են ոչ միայն կրթություն ստանալու, այլև աճի, ինքնաբացահայտման և կայացման կարևոր շրջան: Համալսարանում ձեռք եմ բերել ամուր մասնագիտական գիտելիքներ, զարգացրել եմ հաղորդակցման, համագործակցության, ստեղծագործ մտածողության, ժամանակի ճիշտ կառավարման հմտություններ, որոնք կարևոր են ոչ միայն մանկավարժի, այլև յուրաքանչյուր մարդու կյանքում:

Համալսարանական կյանքս եղել է հետաքրքիր, ակտիվ և հագեցած: Մասնակցել եմ տարբեր գիտաժողովների, սեմինարների, միջոցառումների և կրթական ծրագրերի, որոնք հնարավորություն են տվել ընդլայնելու իմ գիտելիքները, ձեռք բերելու նոր փորձ և ավելի վստահ քայլել դեպի իմ մասնագիտական նպատակները: Յուրաքանչյուր նման հնարավորություն դարձել է նոր բացահայտումների և ինքնազարգացման հերթական փուլ:

Իմ ուսանողական տարիների մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում նաև մանկավարժական պրակտիկաները: Դրանք ինձ հնարավորություն տվեցին իրականում զգալ ուսուցչի մասնագիտության պատասխանատվությունն ու կարևորությունը: Ամեն ժպիտ, յուրաքանչյուր հաջողված դաս և երեխաների անկեղծ վերաբերմունքը ևս մեկ անգամ համոզեցին ինձ, որ ճիշտ մասնագիտություն եմ ընտրել:

Համալսարանական տարիներն ինձ նվիրել են նաև լավ ընկերներ, հիշարժան ծանոթություններ և գեղեցիկ հիշողություններ, որոնք, վստահ եմ, միշտ կմնան ինձ հետ: Այս տարիներին ձևավորվել են ոչ միայն մասնագիտական, այլև մարդկային կարևոր արժեքներ, որոնք ուղեկցելու են ինձ ամբողջ կյանքում:

Առանձնահատուկ շնորհակալություն եմ հայտնում իմ դասախոսներին՝ իրենց նվիրումի, գիտելիքների, արժեքավոր խորհուրդների և մշտական աջակցության համար: Նրանք ոչ միայն փոխանցել են մասնագիտական գիտելիքներ, այլև ոգեշնչել են հավատալ սեփական ուժերին, շարունակել սովորել և երբեք չդադարել զարգանալ:

Իհարկե, այս ճանապարհին եղել են նաև դժվարություններ, անհանգստություններ և փորձություններ, սակայն հենց դրանք են ինձ սովորեցրել լինել համբերատար, չհանձնվել, պատասխանատվությամբ մոտենալ յուրաքանչյուր գործի և վստահ առաջ շարժվել դեպի նպատակներս:

Այսօր, երբ մոտեցել եմ ուսումնառության այս գեղեցիկ փուլի ավարտին, խորին շնորհակալություն եմ հայտնում համալսարանին, դասախոսներին և բոլոր այն մարդկանց, որոնք եղել են իմ ճանապարհի մի մասը, սակայն սա վերջակետ չէ, այլ նոր ճանապարհի սկիզբ: Նախատեսում եմ շարունակել կրթությունս նույն մասնագիտությամբ՝ ընդունվելով մագիստրատուրա, որպեսզի էլ ավելի խորացնեմ իմ մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները և ապագայում դառնամ ավելի լավ մասնագետ:

Համոզված եմ, որ համալսարանում անցկացրած այս տարիները միշտ կմնան իմ կյանքի ամենահիշարժան, ամենաարժեքավոր և ամենաջերմ էջերից մեկը, իսկ այստեղ ստացած գիտելիքներն ու փորձը կուղեկցեն ինձ իմ ամբողջ մասնագիտական ճանապարհին:

Նինա Հարությունյան
Սկզբնական կրթության ֆակուլտետի բակալավրի շրջանավարտ

ՀՊՄՀ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԸՆՁԵՌԱԾ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԾԱՌԱՅԵՑՆԵԼ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԶՈՐԱՑՄԱՆԸ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՐԳՍՅԱՆ
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի օգնական, Հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս

-Հարգելի Հովհաննես, հիշո՞ւմ եք այն օրը, երբ Ձեր անունը կարդացիք Մանկավարժական համալսարան ընդունվողների ցուցակում:

-2008 թ.-ի օգոստոսին, երբ Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանի գլխավոր մասնաշենքի ապակիների վրա ընդունված ուսանողների ցուցակներում գտա իմ անունը, մտքովս անգամ չէր անցնում, որ հավիտյանս կապվելու եմ այս բուհի հետ: 18 տարի է անցել, բազմաթիվ փոփոխություններ են տեղի ունեցել, սակայն ես դեռ այստեղ եմ: Ճիշտ է, մեկ-երկու անգամ տարբեր պատճառներով (ժամկետային ծառայություն, 44-օրյա պատերազմ) որոշ ժամանակով կտրվել եմ մանկավարժական մայր բուհի ամենօրյա հաճելի մթնոլորտից, սակայն այդ ընթացքում էլ մշտապես զգացել եմ իմ սիրելի կրթօջախի շունչն ու ներկայությունը կողքիս:

-Ինչպե՞ս անցան ուսումնառության տարիները՝ բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա...

-Ավարտել եմ բանասիրական ֆակուլտետի բակալավրը, մագիստրատուրան, 2025-ին՝ ասպիրանտուրան: Այդ ընթացքում բախտ է վիճակվել աշակերտել բանասիրության, մանկավարժության և այլ ոլորտներում հանրապետության լավագույն մասնագետներին, որոնցից յուրաքանչյուրն այս կամ այն կերպ ազդել է իմ մասնագիտական կարողությունների զարգացման, աշխատանքային գործունեության և, ամենակարևորը՝ որպես մարդանհատ ձևավորվելու վրա:

-Սովորելու տարիներից էլ սկսեցիք զբաղվել գիտությամբ:

-Այո, դեռ բակալավրում սովորելու տարիներին սկսեցի գիտությամբ զբաղվել: Ավարտելիս արդեն ունեի տպագրված երկու հոդված՝ պրոֆեսորներ Ա. Դոլուխանյանի և Ս. Դանիելյանի ղեկավարությամբ: Մագիստրատուրա ընդունվելիս որպես մասնագիտացում ընտրեցի հայ հին և միջնադարյան գրականության բարդ, սակայն անչափ հետաքրքիր աշխարհը՝ ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ, բ.գ.դ., պրոֆ. Աելիտա Դոլուխանյանի ղեկավարությամբ, որի հետ անցնելիք ճանապարհս պետք է շարունակվեր ասպիրանտուրայում՝ որպես գիտական ղեկավար, ինչպես նաև շարունակվում է այսօր՝ դասախոսական առաջին քայլերն անելիս՝ որպես ամբիոնի վարիչ: Տիկին Դոլուխանյանին աշակերտելը, նրա հետ յուրաքանչյուր զրույցը հնարավորություն է տալիս նոր, հետաքրքիր բան սովորելու: Կարծում եմ, նրա հետ շփված յուրաքանչյուր անձնավորություն կփաստի, որ պրոֆեսորը կարծես «քայլող հանրագիտարան» լինի. չկա այդպիսի նյութ, թեմա, կապված գրականության, պատմության կամ հայագիտության հետ, որին հարգարժան պրոֆեսորը ծանոթ չլինի: Նշեմ, որ պրոֆեսոր Դոլուխանյանն էլ մանկավարժականի շրջանավարտ է և կանգնած է մեր բուհի հիմնադրման ակունքներում:

-Այնուհետև աշխատանք ֆակուլտետի դեկանատում, որի աշխատանքային զարկերակի մի մասը դարձաք:

-Մագիստրատուրայում սովորելուն զուգընթաց մանկավարժականն ինձ հնարավորություն ընձեռեց, և ես սիրով օգտվեցի դրանից՝ պատիվ ունենալով ընդունվելու աշխատանքի իմ հարազատ ֆակուլտետի դեկանատում՝ սկզբում որպես հեռակա համակարգի պատասխանատու, այժմ՝ որպես դեկանի օգնական: Աշխատանքն ինձ հնարավորություն տվեց նախ ծանոթանալ բարձրագույն կրթության կազմակերպման գործընթացում կարևոր նշանակություն ունեցող ֆակուլտետային աշխատանքների առանձնահատկություններին և մշտապես լինել բանասիրական ֆակուլտետի աշխատանքային զարկերակի մի մասը, բայց, ամենակարևորը, ամենօրյա շփման մեջ լինել այնպիսի համալսարանական գործընկերների հետ, որոնց պրոֆեսիոնալիզմն ու մարդկային որակները աննկարագրելի են: Ֆակուլտետի դեկան, բ.գ.դ., պրոֆ. Աշոտ Գալստյանի ղեկավարությամբ ստեղծված կուռ կոլեկտիվը շարունակում է տարիներ շարունակ Հայաստանի և Սփյուռքի դպրոցների համար պատրաստել հայոց լեզվի և գրականության ուսուցիչներ:

-Որպես երիտասարդ գիտնականի՝ Ձեզ հնարավորություն տրվեց մասնակցելու ամենատարբեր գիտաժողովների և երիտասարդական ֆորումների:

-Մանկավարժականի ստեղծած հնարավորություններն վերոնշյալով չեն սահմանափակվում: Ես, լինելով ակտիվ և պրպտող ուսանող, մշտապես փորձել եմ մասնակցություն ունենալ տարաբնույթ գիտաժողովների, կոնֆերանսների ու միջոցառումների, որոնց մասնակցությունը առանց համալսարանի թույլտվության ու ընձեռած հնարավորության՝ անհնարին կարող էր լինել: Նշեմ դրանցից մի քանիսը, որոնք իմ մասնագիտական և աշխատանքային որակները բարձրացնելու հնարավորություն են տվել. երիտասարդական աշխատողի վերապատրաստումներ Հայաստանում, ինչպես նաև ՌԴ Մոսկվա և Եկատերինբուրգ քաղաքներում, հայ-ռուսական, ռուս-հայկական, հայ-վրացական երիտասարդական ֆորումներին մասնակցություն՝ Հայաստանում, ՌԴ Ստավրոպոլ և Չելյաբինսկ քաղաքներում:

Իմ նախաձեռնությամբ և Մանկավարժական համալսարանի ընձեռած հնարավորությամբ 2024-ին պատիվ ունեցա մասնակցելու Համաշխարհային երիտասարդական փառատոնին՝ կազմակերպված ՌԴ Սոչի քաղաքում, որին մասնակցելու համար ընտրվել էին աշխարհի բոլոր երկրներից շուրջ 20.000 երիտասարդ: Այդպիսի լայնամասշտաբ միջոցառման ընթացքում լինել ՀՀ պատվիրակության կազմում՝ մեծ պատասխանատվություն է:

Այս ամենից զատ, իհարկե, Մանկավարժականի ընձեռած հնարավորություններից ինձ համար պետք է առանձնացնեմ աշխարհում իր հնարավորություններով, մակարդակով ու պատմությամբ լավագույն 20 բուհերի մեջ մտնող Իսպանիայի Սևիլիայի համալսարանի բանասիրական ֆակուլտետում մեկ ամբողջ կիսամյակ ասպիրանտական կրթությունը շարունակելը: Erasmus + փոխանակման ծրագրի շրջանակներում լինել Սևիլիայի համալսարանում, աշակերտել միջազգային հարթակներում գրականագիտության ոլորտի լավագույն մասնագետներին. սա իհարկե, յուրաքանչյուր սկսնակ գիտնականի համար երազանքի ճանապարհ է, որն անցել եմ Մանկավարժական մայր բուհի ընձեռած հնարավորության շնորհիվ:

-Ձեր ակտիվությունը շարունակական է նաև տարբեր վերապատրաստումների մասնակցության առումով:

-Այսօր էլ մեր բուհը շարունակում է նոր ճանապարհներ և հնարավորություններ ստեղծել իր ուսանողների, աշխատակիցների համար: Որպես աշխատակից՝ փաստեմ, որ միայն վերջին 2 տարվա մեջ մասնակցել եմ 4 վերապատրաստման ծրագրի, որոնց կազմակերպիչը կամ համակազմակերպիչը եղել է ՀՊՄՀ-ն, և որոնց մասնակցելու հնարավորությունը բաց է եղել բուհի բոլոր մասնագետների համար: Այդպիսի հնարավորությունները շատ են, մնում է կարողանալ ճիշտ օտվել դրանցից և հետագայում Մանկավարժական մայր բուհի ընձեռած հնարավորությունները ծառայեցնել ի շահ սիրելի բուհի և, իհարկե, Հայաստանի Հանրապետության զարգացմանն ու հզորացմանը:

Հարցազրույցը՝ Սիլվա Ասրյանի

Համալսարանը, որը կերտում է մասնագետ և քաղաքացի

Համալսարանական տարիներն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում յուրաքանչյուր ուսանողի կյանքում: Դրանք ոչ միայն մասնագիտական գիտելիքների ձեռքբերման, այլև աշխարհայացքի, արժեքային համակարգի և քաղաքացիական պատասխանատվության ձևավորման կարևորագույն փուլն են: Ինձ համար Հայկական պետական մանկավարժական համալսարանը դարձավ այն կրթական միջավայրը, որտեղ առավել խորությամբ գիտակցեցի մանկավարժի առաքելության վեհությունն ու պատասխանատվությունը:

Բուհում ստացած կրթությունը սովորեցրեց ոչ միայն սիրել և գնահատել գիտությունը, այլև գիտելիքը դիտարկել որպես հասարակության զարգացման կարևորագույն արժեք: Այստեղ ձեռք բերած յուրաքանչյուր գիտելիք, յուրաքանչյուր խորհուրդ և յուրաքանչյուր փորձառություն դարձան իմ մասնագիտական կայացման ամուր հիմքը:

Այսօր արդեն, որպես ուսուցիչ, ամեն օր հնարավորություն ունեմ իմ աշխատանքում կիրառելու համալսարանում ձեռք բերած գիտելիքներն ու մանկավարժական սկզբունքները: Միևնույն ժամանակ, վստահ եմ, որ մասնագիտական զարգացումը շարունակական գործընթաց է: Հենց այդ համոզմունքով էլ որոշել եմ ուսումս շարունակել ասպիրանտուրայում՝ խորացնելով գիտահետազոտական գործունեությունս և ձգտելով իմ ներդրումն ունենալ հայրենի կրթության և գիտության զարգացման գործում:

Իմ ուսանողական ճանապարհը դժվար է պատկերացնել առանց Ուսանողական խորհրդի գործունեության: Այդ տարիները դարձան ինքնադրսևորման, նախաձեռնողականության, թիմային աշխատանքի և առաջնորդության իրական դպրոց: Ուսանողական խորհուրդն ինձ սովորեցրեց պատասխանատվություն կրել, համագործակցել, նախաձեռնություններ իրականացնել և համախմբել մարդկանց ընդհանուր գաղափարների շուրջ: Համոզված եմ, որ այդ փորձառությունը մեծ նշանակություն կունենա նաև իմ հետագա մասնագիտական և հասարակական գործունեության ընթացքում:

Այսօր, ավարտելով համալսարանական կրթության հերթական կարևոր փուլը, խորին երախտագիտությամբ եմ հիշում բոլոր այն դասախոսներին, որոնք իրենց գիտելիքներով, նվիրվածությամբ և մարդկային վերաբերմունքով մեծ ազդեցություն ունեցան մեր մասնագիտական և անձնական կայացման վրա: Շնորհակալություն եմ հայտնում նաև իմ ընկերներին՝ համատեղ անցած ճանապարհի, ձեռքբերումների, փորձառությունների և հիշարժան պահերի համար:

Համալսարանից հեռանալը հրաժեշտ չէ: Այն գիտելիքը, արժեքներն ու գաղափարները, որոնք ստացել ենք այս կրթօջախում, շարունակելու են առաջնորդել մեզ կյանքի և մասնագիտական գործունեության բոլոր փուլերում: Այս ավարտը նոր սկիզբ է՝ նոր նպատակների, նոր պատասխանատվության և նոր նվաճումների ճանապարհին: Համոզված եմ, որ Հայկական պետական մանկավարժական համալսարանի յուրաքանչյուր շրջանավարտ, որտեղ էլ աշխատի ու ստեղծագործի, իր գործունեությամբ պատվով ներկայացնելու է իր հարազատ բուհը և նպաստելու է Հայաստանի կրթության ու գիտության առաջընթացին:

Ֆելիքս Բախչինյան
Պատմության և հասարակագիտության ֆակուլտետի մագիստրատուրայի շրջանավարտ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԹԻՄԱՅԻՆ ՈԳԻՆ

Մանկավարժական համալսարանի Արհեստակցական կազմակերպությունն ուսումնական տարվա ընթացքում ակտիվ գործունեություն է ծավալել՝ ունենալով ՀՊՄՀ ղեկավարության աջակցությունն ու արիկոմի նախագահի ժամանակավոր պաշտոնակատար Մարիամ Եղյանի նախաձեռնողական գործելաոճը:

Տարեվերջը ևս հետաքրքիր ձեռնարկներով հաճելիորեն զարմացրեց բուհի տարբեր ֆակուլտետների պրոֆեսորադասախոսական կազմին, վարչակառավարչական և մյուս ստորաբաժանումների աշխատողներին՝ նրանց պարգևելով Հայաստանի չքնաղ բնությունը վայելելու, պատմամշակութային վայրեր՝ միջնադարյան վանական համալիրներ այցելելու, Իջևանի և Պռոշյանի գինու, կոնյակի գործարաններում մոտիկից տեսնելու հայրենական արտադրության հետաքրքիր գործընթացները:

Հուլիսն սկսվեց Արիկոմի արտագնա նիստով, որտեղ Մարիամ Եղյանի ղեկավարությամբ քննարկվեցին կազմակերպության ընթացիկ գործունեությանը վերաբերող կարևոր հարցեր և ամփոփվեցին ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները:

Նիստից հետո մասնակիցները ճանաչողական այց կատարեցին Պռոշյանի գինու և կոնյակի գործարան, որտեղ ծանոթացան գործարանի հարուստ պատմությանը, արտադրական գործընթացին, գինեգործության և կոնյակագործության բազմամյա ավանդույթներին:

Այնուհետև այցելեցին Արագածոտնի մարզի Կարմրավոր եկեղեցի՝ հաղորդակցվելու մեր ժողովրդի հոգևոր և մշակութային հարուստ ժառանգությանը:

Օրը դարձավ հաճելի շփումների, փորձի փոխանակման և միասնականության ամրապնդման գեղեցիկ առիթ՝ մասնակիցներին պարգևելով հիշարժան և տպավորիչ օր՝ մարմնավորելով կազմակերպության միասնականությունն ու թիմային ոգին:

ՀԻՇԱՐԺԱՆ ՈՒ ՏՊԱՎՈՐԻՉ ԷՔՍԿՈՒՐՍԻԱ

Հուլիսի 3-ին ՀՊՄՀ Արիկոմի աջակցությամբ կայացավ նաև ՀՊՄՀ N57 հիմնական դպրոցի աշխատակիցների էքսկուրսիան: Էքսկուրսիայի մասնակիցների ճանաչողական այցը դեպի Մակարավանք, Ծռվիզի վանք և Իջևանի գինու, կոնյակի գործարան հիշարժան և տպավորիչ օր պարգևեց բոլորին:

Քարեղեն պատմության ներքո

ՀՊՄՀ վարչակառավարչական անձնակազմի աշխատողները հուլիսի 4-ին ճանաչողական և մշակութային այցով եղան գեղատեսիլ Տավուշի մարզում:

Մակարավանքը հայկական միջնադարյան ճարտարապետության բացառիկ կոթողներից է, որը այցելուներին գրավեց ճարտարապետական ինքնատիպ լուծումներով: Այստեղ կարծես դարերի քարեղեն պատմությունն էր հավերժացել, որ մատուցվեց Տեր Արշավիր քահանա հետաքրքիր ու բովանդակալից խոսքով՝ բացահայտելով մեր հոգևոր ժառանգության անգնահատելի արժեքը:

Հաջորդ հանգրվանը Իջևանի գինու-կոնյակի գործարանում էր, որտեղ էքսկուրսիայի մասնակիցները մոտիկից ծանոթացան հայկական գինեգործության բազմադարյա ավանդույթներին և ժամանակակից արտադրական գործընթացներին: Շրջայցը գործարանում չափազանց հետաքրքիր էր. համալսարանականները ծանոթացան հայկական գինու և կոնյակի ստեղծման ճանապարհին՝ խաղողի մշակումից մինչև պատրաստի արտադրանք, և նորովի արժևորեցին հայրենական արտադրանքի բարձր որակն ու համբավը:

Հանգիստ, որ պարգևեցին Աղստև գետի ուրախ խոխոջյունը և ստվերախիտ անտառների զովը, ապա գծվեց եզրափակիչ կանգառը՝ Գոշավանքը՝ հայ ժողովրդի հոգևոր, կրթական և մշակութային կարևորագույն կենտրոններից մեկը: Դարերի այս խոսուն վկան խաղաղ մթնոլորտ պարգևեց յուրաքանչյուրին՝ խոնարհումի և մոմավառության խորհրդավոր պահերով:

Անչափ գեղեցիկ և հուզումնառատ օրը համախմբեց գործընկերներին նոր գիտելիքների, հաճելի շփումների ու բնության հիասքանչ տեսարանների միջավայրում:

Արհմիությունը վստահեցնում է՝ նման նախաձեռնությունները, որ նպաստում են ոչ միայն մեր պատմամշակութային արժեքների ճանաչմանը, այլև աշխատանքային կոլեկտիվի համախմբմանը, փոխադարձ ջերմ հարաբերությունների ամրապնդմանն ու միասնականության ոգու ձևավորմանը, շարունակական են: Տարեվերջը նմանօրինակ նախաձեռնությունների շուրջ կշարունակի միավորել համալսարանականներին՝ միասին գեղեցիկ հիշողություններ կերտելու համար:

Ուսուցողական և ճանաչողական այց

Մանկավարժական համալսարանի Պատմության և հասարակագիտության, Կենսաբանության, քիմիայի և աշխարհագրության ֆակուլտետների աշխատողների մասնակցությամբ Արագածոտնի մարզում կայացավ ուսուցողական և ճանաչողական այց:

Այցին ներկա էին նաև համայնքի ղեկավար կազմը, ուսուցիչներ և աշակերտներ:

Դասախոսները դաշտային պայմաններում ներկայացրին մարզի պատմամշակութային և բնական առանձնահատկությունները՝ համադրելով տեսական և գործնական գիտելիքը:

Մասնակիցները ծանոթացան Դաշտադեմի ամրոցին և մասնակցեցին մասնագիտական քննարկումների:

Երկուստեք ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ ընդլայնելու բուհ–համայնք համագործակցությունը և իրականացնելու համատեղ կրթական ծրագրեր:

Անմոռանալի օր

ՀՊՄՀ Կրթության հոգեբանության և սոցիոլոգիայի ֆակուլտետի աշխատակիցները հուլիսի 5-ին այցելեցին Սևանավանք, վայելեցին նավարկություն Սևանա լճում, այնուհետև եղան Գոշավանքում, Հաղարծինում, Պարզ լճում և եղնիկների պուրակում:

Հմուտ զբոսավարի ուղեկցությամբ անցկացված էքսկուրսիան վերածվեց հաճելի, բովանդակալից ու ճանաչողական ճանապարհորդության՝ բնության հրաշալի տեսարաններով ու հետաքրքիր բացահայտումներով այն դարձնելով մարդկային ջերմ շփումների ու դրական հիշողությունների անմոռանալի օր:

Համադրեցին աշխատանքայինն ու օգտակարը

Սկզբնական կրթության ֆակուլտետի աշխատակազմը խորհրդի նիստն ու հանգիստը մեկտեղեցին Կոտայքի մարզի Գառնի համայնքում:

Գեղեցիկ օրվա տպավորությունները աննկարագրելի էին: Ֆակուլտետից դուրս էքսկուրսիոն այցը նորովի ամբողջացրեց մասնակիցների մարդկային շփումները ու միասնականությունը:

Գրանցման վկայական՝ 01Մ00184 տրված է 26.03.2008 թ.
Հասցեն՝ Տիգրան Մեծի 17, հեռ. 59-70-97:
էլ. փոստ՝ Newspaperaspu.am, asryansilva@gmail.com
Ծավալը՝ 2 տպ. մամուլ

Թերթի նյութերի արտատպումներն առանց խմբագրության համացայնության արգելվում է:
Հղումը պարտադիր է:
Թերթը կարող եք կարդալ ՀՊՄՀ կայքում՝
www.aspu.am

Գլխավոր խմբագիր՝
Սիլվա ԱՍՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու
Էջադրումը՝ Լուսինե ԼԱԼԱՅԱՆԻ